



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3090

ԿԱՆՈՆ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԼԲԵԱՆՑ

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱԴԷՄ



ՈՐՈՇ ՄԱՄԲ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԺՈՂՈՎՈՅ

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԼԲԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱԴԷՄ

271

4-21

271
4-21

ԿԱՆՈՆ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՎԵՐԱՔՆՆԵԱԼ

Ի ՁԵՌՆ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽԲԻՆ ԿԱԶՄԵԼՈՅ
Ի ԳԵՐԱՊԱՏԻ ԱՍՏՈՒԱԽԱՏՈՒՐ, ՄԱՄԲՐԷ ԵՒ ՍԱՀԱԿ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ

ԵՒ

ՅԱՐԺԱՆԱՊԱՏԻ ԱՆԴՐԷԱՍ, ՂԵՒՈՆԴ, ԳԷՈՐԳ ԵՒ ՏՐԴԱՏ
ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

ԸՆԿԱԼԵԱԼ

Ի ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԳՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ
ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ԵՒ

ՄԱՏՈՒՑԵԱԼ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍԺՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ
Ի ՎԱԽԵՐԱՅՈՒՄՆ

1886

2010

2001

Կ Ա Ն Ո Ն

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

ՄՐԲՈՅ ՅԱԿՈՎԱԲԵԱՆՅ

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱԴԵՄ

Գ Լ Ո Ւ Խ Ա .

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾ 1. ՄՐԲՈՅ ՅԱԿՈՎԱԲԵԱՆՅ
Միաբանութիւնը կը կազմուի Սրբոց Յակովբեանց
Առաքելական Աթոռոյ Գահակալ Պատրիարքէն՝
որ Գլուխ է Միաբանութեան, եւ հետեւեալ
կարգերէն, որք են՝

Եպիսկոպոս	Թուով	5
Վարդանայեցի	"	40
Սարկաւադք	"	12
Դպիրք	"	12
Ժառանգաւոր աշակերտք	"	30
Քրձաղգեաց եղբարք	"	80
Մայրապետ քորք	"	30
		209

53/99-ահ



39916-64

Ա. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՅԱՆԴԱՄԱՆՑՈՒԹԻՒՆ

307. 2°. Սրբոց Յակովբեանց Միաբանութեան անդամ ընդունուելու փափաքող անձն պէտք է գրաւոր խնդիր մատուցանէ Տնօրէն Ժողովոյն. իսկ ընդունուելու համար պայման է՝ 1°. առողջ ըլլալ մարմնով. 2°. 16 էն մինչեւ 18 տարեկան հասակաւ՝ եթէ Ժառանգաւորաց Վարժարանի աշակերտութեան կ'ուզէ մտնել ներկայացողը, 18 էն մինչեւ 40 տարեկան՝ եթէ Քրձազգեցից կարգը ընդունուիլ կը փափաքի, և 30 էն մինչեւ 40՝ եթէ Մայրապետ է. 3°. բարեբարոյ վիայեալ, եւ 4°. Միաբանութեան մէջ որ եւ է գործով մը Ս. Աթոռոյ ծառայութիւն մատուցանելու կարող և պատրաստական ըլլալ:

307. 3°. Երկրորդ յօդուածոյ մէջ նշանակեալ հանգամանք մասնաւոր վկայագրով ստուգուելէն, և բժշկական քննութեամբ հաստատուելէ ետքը՝ Ընտրելիին վարքն ու բարքը և յաջողակութիւնը հասկցուելու համար Տնօրէն Ժողովոյ կողմէն փորձոյ կ'ենթարկուի վեց ամիս:

307. 4°. Զինի վեցամսեայ փորձոյ, Ընտրելիին վկայագրերը և փորձոյ Ժամանակ իր վրայ հսկող Պաշտօնակալին Տեղեկագիրը յատենի Տնօրէն Ժողովոյ կարդացուելով, եթէ ընդունելութիւնն որոշուի, Միաբանութեան Մայր—Տումարին մէջ նստուել կ'արձանագրուի, և անմիջապէս պաշտօնը սահմանուելով՝ կը յանձնուի Տեսչութեան խնամոց ում կը պատկանի:

307. 5°. Եթէ անդամակցութեան խնդրարկուն արդէն Եկեղեցական դասէ է, առողջական և բարոյական և Եկեղեցական վիճակը կանոնաւոր ըլլան ստուգուելէն ետքը՝ երկու տարի ամբողջ փորձոյ կ'ենթարկուի, և ապա « Միաբանութեան կանոնաց հնազանդութեամբ Ս. Աթոռոյ հաւատարմաբար ծառայելու » խոստմնագիր առնուելով ձեռքէն, կը վճռուի ընդունելութիւնն Տնօրէն Ժողովով:

Բ. ՊԱՐՏԻ ԵՒ ԻՐԱՒՈՒՆԻ ՄԻԱԲԱՆԻՑ

307. 6°. Միաբանք պնդողին իւրաքանչիւրն իր կարողութեան չափով ծառայութիւն մատուցանել Ս. Աթոռոյ: Այն Միաբանը, որ պաշտօնի կը կոչուի, և առանց օրինաւոր արգելք ունենալու, զոր պէտք է յառաջ բերէ, կը մերժէ դայն և կը զլանայ իր ծառայութիւնը, պարտադանց կ'ըլլայ և պատժապարտ:

307. 7°. Միաբանք իրաւունք ունին Ս. Աթոռէն ընդունել, — Ա. Բնակարան, Սնունդ, իսկ Սարկաւազունք, Դպիրք, Ժառանգաւորք և Քրձազգեացք նսեւ Հափուս, և իւրաքանչիւրն ինչպէս նսեւ Վարդապետք եւ Եպիսկոպոսունք իրենց անձնական մանր ծախքն հոգալու համար՝ Միաբանական անունով տարեկան մը, որ անձնիւր կարգի եւ աստիճանի յատուկ բաժանում ունի, և Պաշտօնէական անունով տարեկան մը, որ իւրաքանչիւր պաշտօնի յատկացած ըլլալով կը տրուի Պաշտօնակա-

լաց : — Բ. Հիւանդութեան ժամանակ Դարձան , եւ ճերութեան ժամանակ խնամք . — Գ. Ուսման և Դաստիարակութիւն , անոնք՝ որ յարմարութիւն ունին , և ՚ի մասնաւորի անոնք՝ որ Եկեղեցականութեան կը պատրաստուին . — Դ. Եկեղեցական Կարգ և Ս. Աստիճան՝ անոնք միայն որ արժանաւորութիւն և փափաք ունին , և որոյ զանազան աստիճանի բարձրացումն՝ Լուսարարապետի և Դպրոցաց Տեսչի Տեղեկագրոց վրայ Տնօրէն Ժողովով կ'որոշուի , բաց ՚ի Եպիսկոպոսական աստիճանի բարձրացումէն , որ Տնօրէն Ժողովոյ առաջարկութեամբ Միաբանական Ընդհանուր Ժողովով կ'որոշուի :

ՅՕԴ. 8°. Միաբանք ազատ են իրենց անձնական դրամով , իրենց անձին յատուկ կալուած գնելու կամ շինելու , պայմանաւ՝ որ սեփականութիւնը Ս. Աթոռոյն ընծայեն Պաշտօնական կտակագրով (Վաճֆի) , և միայն փարձքը կամ արդիւնքը վայելեն իրենք՝ ըստ պայմանաց Կտակագրոյն :

Պատրիարքական Փոխանորդ ՚ի Կ. Պօլս և Տեսուչք միջակաց չեն կրնար առանց հրամանի Տնօրէն Ժողովոյ՝ անձնական կալուած գնել կամ շինել իրենց պաշտօնավարութեան միջոցին եւ երկրին մէջ :

Գ. ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 9°. Ո՛ր և է Միաբան կրնայ ամբաստանութեան ենթարկուիլ , բայց ամբաստանութիւնը նկատողութեան առնուելու համար պէտք է որ՝

Ա. գրաւոր , և Բ. բացորոշ ըլլայ , և Գ. ստորագրեալ գէթ երկու Միաբաններէ՝ եթէ ամբաստանեալն ֆրձաղգեացներու կարգէն է , երեք Եկեղեցական Միաբաններէ՝ եթէ Սարկաւագ կամ Վարդապետ է , հինգ՝ եթէ Եպիսկոպոս է , եօթն՝ եթէ ամբաստանութիւնը Պատրիարքին վրայ է .

Ամբաստանութիւնք Տնօրէն Ժողովոյ մէջ կը քննուին և կը վճռուին : Պատրիարքի ամբաստանութեան խնդիրը Միաբանական Ընդհանուր Ժողովոյ Տեղեկագրով կը ներկայանայ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ եւ անդ կ'ընդունի իր վճիռն :

Դ. ՀՐԱԺԵՇՏ Ի ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՍՅ

ՅՕԴ. 10°. Ո՛ր և է Միաբան իրաւունք ունի հրաժեշտ տալ Միաբանական կեանքէ հետեւեալ պայմաններով .

Ա. Երբ Միաբանը այնպիսի հիւանդութեան մը կ'ենթարկուի , որ չընտելէր նմա այլ եւս շարունակել Միաբանական կեանքը :

Բ. Երբ Միաբանը արդէն ծառայութիւն մատուցած է Ս. Աթոռոյն՝ առ նուազն երեք տարի՝ եթէ Ժառանգաւորաց Վարժարանի աշակերտելով ուսմունքն աւարտած է և չէ՛ ուզեր կամ յարմար չէ՛ դատուեր Եկեղեցական կարգը մոնելու . և եօթն տարի՝ եթէ Եկեղեցական դասէն է : Սոյն պարագայից մէջ ծառայութեան տարիները կը հաշուին Ժառանգաւորաց համար՝ Վարժարանէն

եղնելով Գալրաց կամ Քրձաղգեցից կարգը մտած օրէն սկսեալ. Եկեղեցականաց համար՝ գտնուած աստիճանն ընդունած օրէն սկսեալ. իսկ դրսէն եկած Եկեղեցականներուն համար՝ զկնի փորձոյ Միաբանութեան մէջ ընդունուած օրէն սկսեալ :

ՅՕԴ. 11°. Մի և միւս պայմաններով հրաժարիլ ուզող Միաբանք խնդրագիր կը մատուցանեն Տնօրէն ժողովոյ, որ պէտք եղած հետազոտութիւնն ընելով, եթէ իրաւացի գտնէ խնդիրը՝ կը վճռէ հրաժարումը :

ՅՕԴ. 12°. Հրաժարեալ Միաբանը պարտի իր հաշիւներն ու պաշտօնավարութեան համարը կատարելապէս տալ, եւ ապա իր անձին սեփական գոյքն առնելով բաժնուիլ Միաբանութենէն :

ՅՕԴ. 13°. Հրաժարեալ Միաբաններէն անոնք որ կը խնդրեն մնալ միշտ անդամ Միաբանական Ուխտին Սրբոց Յակովբեանց, պարտին խոստմնագրով յանձն առնուլ՝ 1°. Ս. Աթոռոյ կողմէն՝ ո՛ր և է պարագայի մէջ իրենց յանձնարարեալ ծառայութիւնները յօժարակամ կատարել, պայմանաւ՝ որ սոյն ծառայութիւնք չը պարտաւորեն զիրենք վերստին Միաբանական կենաց լուծին ներքեւ մտնելու՝ յորմէ հրաժարած են, և կարենան համաձայնիլ իրենց վերջէն ընդունած Ազգային հրապարակական պաշտօնի կատարման հետ՝ եթէ ունին. եւ 2°. առանց Ս. Աթոռոյ հրամանին Եկեղեցական աստիճանի բարձրացում չ'ընդունիլ, եւ նոյն ժամանակ կ'ստանան վկայագիր մը, որ իրաւունք կուտայ իրենց՝ Ս. ստորագրել միշտ “ Ի Միաբանական Ուխտին Սրբոց Յակովբեանց ”, Բ. գալ

վերստին Միաբանական կենաց մէջ մտնելու երբ եւ կամին, պայմանաւ՝ որ դուրսը անցուցած կենաց համար պատուաւոր վկայական ունենան ի ձեռին, և անարատ ներկայանան բարոյապէս և նիւթապէս. և Գ. քուէ ընդունիլ Միաբանական Ընդհանուր Ժողովէն՝ Պատրիարքական ընտրելութեան և Աւագ-Լուսարարութեան համար, եթէ ունին օրինական հանգամանք սոյն պաշտօններու ընտրելութեան :

ՅՕԴ. 14°. Նախորդ յօդուածոյ համանման տնօրէնութիւն կ'ըլլայ և մի և նոյն իրաւունքք կը տրուի նաև Միաբանութեան այն անդամներուն, որք ծառայութեան պայմանեալ ժամանակը չը լրացուցած (Յօդ. 10) Ս. Աթոռոյն թոյլտուութեամբ պաշտօնի կը կոչուին Ազգային Կեդրոնական Վարչութենէն, և յանձն կ'առնուն խոստմնագրով՝ Ա. Մատուցանել Ս. Աթոռոյ, սովորական պարագայի Դժ՝ այն ամէն ծառայութիւնք, որ կը խնդրուին իրենցմէ, և որք չեն հակառակիր իրենց Ազգային նոր պաշտօնին կատարման հետ. Բ. Արարչոյ կարգի պարագայի Դժ՝ ձգել դրսի պաշտօնն և դառնալ գալ ի Ս. Աթոռն, երբ Սա՛նհրաժեշտ կարօտութիւն զգարով կը կոչէ զնոսա սուժամապէս իր անմիջական ծառայութեան. եւ Գ. երբ հրաժարի այդ պաշտօնէն անմիջապէս վերադառնալ ի Ս. Աթոռն :

Ե. ԱՐՏԱԲՍՈՒՄՆ Ի ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ

307. 15°. Այն ամեն Միաբանը, որ կանոնաց անսաստեղծ անվայել վարք կ'ունենան, կամ անհաւատարիմ կը գտնուին և կամ առանց օրինաւոր պայծառի իրենց յանձնուած պաշտօնը կը մերժեն կամ խոյս կուտան անկէ, կ'արտաքսուին Միաբանութենէն հետեւեալ պայմաններով.

Ա. Սոյն տեսակ յանցապարս Միաբանը՝ նախ իր անմիջական մեծէն յուղղութիւն կը յորդորուի երկիցս և երկիցս, և եթէ անուղղայ մնայ, գանգատագրով կը ներկայուի Տնօրէն Ժողովոյ, որ առ առաւելն մէկ ամսուան մէջ պէտք եղած քննութիւնն ընելով կուտայ իր վճիռը, և յորդոր կամ պատիժ ինչ որ արժան է և պատշաճ՝ ի գործ կը դնէ զնա ի կարգ բերելու:

Բ. Իսկ եթէ յանցապարտը դարձեալ շարունակէ իր ընթացքը, Տնօրէն Ժողովը դատաստանաւ կը վճռէ անոր արտաքսումը՝ եթէ Դպիր կամ Քրճագգեաց կամ Մայրապետ է, իսկ եթէ Եկեղեցական ոք՝ մասնաւոր Տեղեկագրութեամբ անոր արտաքսումը կ'առաջարկէ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ, որ քննութեամբ և վիճաբանութեամբ վճիռ կ'արձակէ:

307. 16°. Արտաքսեալ Միաբանը նախ պարտի իր հաշիւն ու համարը կատարելապէս տալ, եւ ապա իր անձին սեփական գուքն առնելով, հեռանալ Միաբանական Ուխտէն, եւ նաեւ Ս. Երուսաղէմէն՝ եթէ Եկեղեցական կարգէն է:

307. 17°. Այն Միաբանները՝ որք կամ օրինաւորապէս հրաժարելով Միաբանական կեանքէ, և կամ Ս. Աթոռոյ Թոյլտուութեամբ Ազգային պաշտօնի կոչուելով, անգամ մնացած են Սրբոց Յակովբեանց Ուխտին (307. 13, 14), բայց իրենց խոստմանց գրժելով չեն կատարեր խոստմնագրով յանձնառեալ պայմաններն, և կամ իրենց վարուք եւ գործովք անպատուութիւն կը պատճառեն Ուխտին՝ որոյ անգամ են, և յետ երկիցս և երկիցս յորդորուելոյ անուղղայ կը մնան, Տնօրէն Ժողովոյ կողմէն ամբաստանութեան կ'ենթարկուին առաջի Միաբանական Ընդհանուր Ժողովոյ, որ քննութեամբ զարժանն կը տնօրինէ եւ արտաքսումը կը վճռէ:

307. 18°. Արտաքսեալ Միաբանից անունները և պատճառներն կը նշանակուին Միաբանութեան Մայր-Տունարին, և առ Ազգային Երեսփոխանական Ժողով մատուցած տարեկան Տեղեկագրութեան մէջ. և Եկեղեցական արտաքսելոց համար ամեն անգամ և անմիջապէս Տեղեկագիր կը տրուի նաեւ Ազգային Պատրիարքարանի եւ Արարատեան Մայր-Աթոռոյ, և ի հարկին՝ ի լուր Ազգայնոց կը հռչակուի Լրագրութեան միջոցաւ:

Զ. ՎԱԽՃԱՆ ՄԻԱԲԱՆԻՑ

307. 19°. Ո՛ր և է Միաբան թէ՛ վանքին մէջ եւ թէ՛ դուրս օտար երկիր վախճանած Ժամանակ, բոլոր գուքը գրի կ'առնուին, և հաշիւները տեսնուելով կը կարգադրուին Տնօրէն Ժողովոյ միջոցաւ:

307. 20°. Վախճանեալ Միաբանից օրինաւոր ժառանգն Ս. Աթոռն ըլլալով, անոնց գոյքէն Ս. Աթոռոյն և այլոց վերաբերեալ և պատահապէս իրենց քով գտնուած դրամ, անօթ, զգեստ, գիրք և այլն, իրենց տեղը յանձնուելով, ինչ որ աւելնայ՝ Ս. Աթոռոյն կ'անցնի ՚ի յիշատակ անուան նորա, որոշմամբ Տնօրէն ժողովոյ, և ամենայն ինչ կանոնաւորապէս արձանագրուելով Ատենագրութեանց մէջ. մի և նոյն կը գործադրուի նաև Լուսարարապետի մահուան ատեն նորա սենեկի և սեփական գոյից նկատմամբ, սակայն անմիջապէս՝ ըստ սովորութեան՝ Տնօրէն ժողովոյ միջոցաւ Ս. Յակովբայ Աւանդատան դուռը կը կնքուի եւ բանալիները կնքոյ ներքեւ կը պահուին մինչ ցընտրութիւն եւ հաստատութիւն նոր Լուսարարապետի: Իսկ Պատրիարքի վախճանման ատեն վախճանելոյն եւ Պատրիարքարանի գոյից քննութիւնն Միաբանական Ընդհանուր ժողովով ընտրեալ քննիչ Մասնախմբի մը գործակցութեամբ կը կատարուի (307. 27):



Գ Լ Ո Ւ Խ Բ .

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

307. 21°. ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ Միաբանութեան վարչութիւնը յանձնուած է Առաքելական Աթոռոյ Գահակալ Պատրիարքի նախագահութեամբ Տնօրէն ժողովոյ մը, որ համարատու է առ Միաբանական Ընդհանուր ժողով, և Սահաւ Ազգային Երեսփոխանական Ընդհանուր ժողով:

Ա . ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԷ

307. 22°. Պատրիարքը Սրբոց Յակովբեանց Առաքելական Աթոռոյ ցկեանս Գահակալն է, Գրուի համանուն Միաբանութեան, Նախագահ Միաբանական Ընդհանուր և Տնօրէն ժողովոց, և Գործադիր Վարչական որոշմանց:

307. 23°. Պատրիարքին պաշտօնն է միանգամայն և պարտաւորութիւնը՝ Միաբանութեան կանոնագրին ճշգիւ հետեւողութեամբ,

Ա. Կառավարել Հայրաբար Միաբանական Ուխտն Սրբոց Յակովբեանց, և օր աւուր բարեկարգութեամբ եւ գիտութեամբ առաւել զարգացման հոգ տանել:

Բ. Տնօրինական Ս. Տեղեաց և այլ Ուխտատեղեաց նկատմամբ Ազգային սեփականութեանց և արտօնութեանց անկորուստ և պայծառ պահուելուն հսկել:

Գ. Ս. Աթոռոյ սեփական վանօրէից և Կալուածոց պահպանութեան և բարգաւաճման հոգ տանել.

Դ. Սոյն հաստատութեանց շնորհիւ և Ս. Աթոռոյ կարողութեան չափով՝ Ազգային դաստիարակութեան ծաւալմանն օժանդակել.

Ե. Ս. Աթոռոյ Թեմական Ժողովրդոց Առաջնորդական խնամք տանել.

Զ. Եւ իբրեւ միջնորդ Միաբանական յարաբերութեանց, առ Մայր-Աթոռն Արարատեան՝ ամենայն Հայոց Կաթողիկոսութեան պարտ ու պատշաճ մեծարանքն ընծայել, առ Կեդրոնական վարչութիւնն՝ պահել Ս. Աթոռոյն իրաւունքն և պարտիքն համաձայն Կանոնագրիս և Ազգային Սահմանադրութեան. առ Օտարագգի Քրիստոնեայ Միաբանութիւնս՝ անկորուստ պահել Ազգին իրաւունքն և անարատ Միաբանութեան պատիւն, և ուղղակի առ Նախարարս եւ առ Բարձրագոյն պաշտօնակալս եւ Տեղական Կառավարութիւնն՝ հրովարտակներով շնորհեալ կամ վաւերագրերով՝ հաստատեալ առանձնաշնորհումներն ու արտօնութիւններն և վաւերական հնաւանդ սովորութիւններն անվթար պահպանել:

ՅՈՒ. 24°. Պատրիարքն՝ եթէ հակառակ վարուի Միաբանութեան Կանոնագրին, ամբաստանութեան ներքեւ կ'ընկնի:

ՅՈՒ. 25°. Ամբաստանութիւնը կրնայ Միաբանութեան մէջ տեղի ունենալ, եւ կը քննուի Միաբանական Ընդհանուր Ժողովով (Յօդ. 9), և կամ Ազգային Երեսփոխանաց կողմէն կ'արտասա-

նուի. մի և միւս պարագայից մէջ՝ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ ամբաստանական Տեղեկագիրն կամ Երեսփոխանական ամբաստանագիրն Ազգային Երեսփոխանական Ժողովոյ Ատենը կ'ենէ, եւ անդ կը քննուի և վճիռ կ'առնու. Կ. Պօլսոյ Պատրիարքի ամբաստանութեան նկատմամբ հաստատեալ կանոնաց համեմատ:

ՅՈՒ. 26°. Եթէ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ վճռով աւաստանեալ Պատրիարքը Ս. Աթոռէն հեռանալու դատաւարտուի, անմիջապէս Միաբանական Ընդհանուր Ժողովն Տեղեկալութեան համար Ընարեւայ ցոյսի կը պատրաստէ ըստ օրինակի Պատրիարքական Ընտրելեաց (Յօդ. 29), և Տեղեկագրութեամբ կը ներկայէ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ, որ անոր մէջէն կ'ընտրէ զՏեղակալն եւ Բ. Դռնէն հաստատութեան պաշտօնագիրն ընդունելով կը յանձնէ նմա Պատրիարքական իշխանութիւնը մինչեւ ցնբումն կամ ցմահ Նորին:

ՅՈՒ. 27°. Երբ Պատրիարքի վախճանմամբ Առաքելական Աթոռը թափուր մնայ, Պատրիարքական Փոխանորդը Տնօրէն Ժողովոյ խորհրդակցութեամբ Միաբանական Ընդհանուր Ժողով գումարել փութալով՝ ընտրել կուտայ.

Ա. Երեք անձերէ բաղկացեալ քննիչ Մասնախումբ մը, որ պաշտօն ունի Տնօրէն Ժողովոյ հետ Պատրիարքի գոյքն և ընդհանրապէս Պատրիարքարանի մէջ գտնուած ամեն բան գրի առնուլ և ցուցակաւ Տնօրէն Ժողովոյն յանձնելով Տեղեկագիր մատուցանել Միաբանական Ընդհա-

նուր ժողովը (Յօդ. 19, 20), իսկ Տնօրէն Ժողովը՝ ի հարկին բանալու արտօնութեամբ Պատրիարքարանը կնքոյ տակ կը պահէ մինչ ցԳահակալութիւն նոր Պատրիարքի, եւ

Բ. Պատրիարքական Տեղակալը, որ քուէից բացարձակ առաւելութեամբ կ'ընտրուի միանուն քուէով, որ իր ընտրութեան հաստատութեան պաշտօնագրոյն Կ. Պօլսէն գալէն յետոյ կը վարէ իր պաշտօնը ըստ ՅՏԴ յօդուածոյ :

ՅՅԴ. 28°. Պատրիարքի վեհաճանման պատճառաւ ընտրուած Տեղակալին պաշտօնն է Պատրիարքի ընտրական գործողութեանց նախագահել, եւ մինչեւ ցԳահակալութիւն նորընտիր Պատրիարքի՝ անոր պաշտօնը վարել ըստ Կանոնագրի Միաբանութեան :

ՅՅԴ. 29°. Ս. Երուսաղէմի Առաքելական Աթոռոյ Պատրիարքը Ազգային Երեսփոխանական Ժողովով կ'ընտրուի Միաբանութեան ներկայած Ընդհանրաց մէջէն, որոց ցուցակը կը պատրաստուի հետեւեալ կերպիւ .

Նախ՝ Միաբանական Ընդհանուր Ժողովը կը գումարի՝ Միաբանութեան ամբողջ Եկեղեցական անդամոց կէսէն գէթ մէկ աւելի թուով, ընդ նախագահութեամբ Պատրիարքական Տեղակալի, որ կը յիշեցնէ Ժողովականաց Պատրիարքական ընտրելիութեան արժանաւորութեան հանգամանքը եւ կը հրաւիրէ զնոսա խղճի մտօք կատարել իրենց ընտրութիւնը :

Իւրաքանչիւր ընտրող թղթի մը վրայ կը գրէ այն ամեն Միաբան Եպիսկոպոսաց եւ Վարդապետաց

տաց անունները, որք երեսուն եւ հինգ տարին լրացուցած, եւ Օսմանեան Տէրութեան հպատակ ըլլալով, ըստ իւր խղճի՝ կրօնական, բարոյական եւ ուսումնական բարեմասնութեամբք արժանի են Պատրիարքական Գահը բարձրանալու :

Քուէհամար կը կատարուի սոյն քուէից, եւ առաւելագոյն քուէ ստացող անուններէն քուէից առաւելութեան կարգաւ եօթն անձինք որոշուելով՝ Առաջին յո-յակի մը կը պատրաստուի Եօթնեփն ընտրելաց :

Ժողովականք երկրորդ անգամ քուէարկութեան կը հրաւիրուին՝ սոյն Եօթնեփն ընտրելաց յո-յակին մէջէն միայն երեք անձի վրայ քուէներն ամփոփելու պայմանաւ. եւ քուէհամար կատարուելով Երկրորդ յո-յակի մը կը պատրաստուի Երեքն ընտրելաց՝ իւրաքանչիւրին ընդունած քուէից առաւելութեան կարգաւ. իսկ եթէ երկու ընտրութեանց ժամանակ հաւասար քուէներ պատահին՝ վիճակաւ կ'որոշուի Ընտրելին, եւ սոյն Երեքն ընտրելաց յո-յակին՝ իբր արժանաւորագոհից ընտրելաց յո-յակի հանդերձ առաջին Եօթնեփն ընտրելաց յո-յակաւ, եւ իւրաքանչիւր ընտրելոյ բարեմասնութիւնքն եւ արդիւնքն նկարագրող Տեղեկագրով կը ներկայուի Ազգային Երեսփոխանական Ընդհանուր Ժողովոյ, որ անոց մէջէն կ'ընտրէ զՊատրիարքն Ս. Երուսաղէմի, Կ. Պօլսոյ Պատրիարքի ընտրութեան տրամադրութեան համեմատ :

ՅՅԴ. 30°. Նորընտիր Պատրիարքը՝ եթէ Վարդապետ է, Միաբանական Ընդհանուր Ժողովոյ վկայականով եւ Կ. Պօլսոյ Պատրիարքի յանձ-



նարարականով Ս. Էջմիածին կ'ուղեւորի և Եպիսկոպոսութեան աստիճան կը բարձրանայ . եւ վերադարձին՝ ՚ի Կ. Պօլիս՝ յԱտենի Աղբային խողովոյ ուխտ ընելով « Հաւատարիմ մնալ Տէրութեան, Ազգին եւ Ս. Աթոռոյն Երուսաղէմի, եւ հսկել անթերի գործադրութեան Կանոնագրի Միաբանութեան » եւ ընդունելով Կայսերական Հրովարտակ' կը դառնայ ՚ի Ս. Երուսաղէմ և սովորական արարողութեամբ կը գահակալէ իր Աթոռն :

Իսկ եթէ Եպիսկոպոս է, ընդունելով իր ընտրութեան եւ հաստատութեան պաշտօնագրերն՝ յԱտենի Սրբոց Յակովբեանց Տաճարին և ՚ի ներկայութեան Միաբանական Ընդհանուր Ժողովոյ հանդիսաւորապէս կը կատարէ վերոյիշեալ ուխտն և կը բազմի յԱթոռն Պատրիարքական :

Ս. Եկեղեցեաց մէջ Պատրիարքի անուան յիշտակութիւնը կ'ըսկսի իր ուխտի կատարումէն անմիջապէս յետոյ :

Բ. ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎ

307. 31°. Տնօրէն Ժողովը կը կազմուի՝ Լուսարարապետէն, որ անփոփոխ անդամ է, և պարբերաբար փոփոխելի վեց անդամներէ :

307. 32°. Տնօրէն Ժողովոյ անդամք չորս տարի պաշտօն վարելու պայմանաւ կ'ընտրուին Միաբանական Ընդհանուր Ժողովէն, առաջին անգամ Պատրիարքին՝ Լուսարարապետին հետ կազմած կրկնաթիւ ցանկին վրայ, միայն թէ առաջին ընտրութենէն երկու տարի վերջը երեք անգամք վե-

ճակաւ, և այնուհետեւ երկու տարին միանգամ պաշտօնավարութեան քառամեայ շրջանը լրացընող անգամք կը դադրին, որոց տեղը Միաբանական Ընդհանուր Ժողովը նոր երեք անդամներ կ'ընտրէ Ս. Պատրիարքին՝ մնացեալ անգամոց հետ կազմած կրկնաթիւ ցանկին վրայ :

Թէ՛ վեճակաւ և թէ՛ կարգաւ դադարեալ անգամք վերընտրելի են, եւ Ընդհանուր Ժողովը ազատ է դադարեալ անգամոց եւս քուէ տալ եթէ ցանկէն դուրս թողուած են :

307. 33°. Տնօրէն Ժողովը կանոնաւորապէս շաբաթը երկու՝ իսկ ստիպողական հարկին աւելի նիստ կ'ընէ, կը նախագահէ Ս. Պատրիարքը (կամ Փոխանորդը ՚ի բացակայութեան Ս. Պատրիարքին), կ'առաջնորդուի իւր Դիւանէն՝ կազմեալ մէկ Ատենապետէ և մէկ Ատենադպրէ, զոր իւր մէջէն կ'ընտրէ երկու տարի պաշտօն վարելու պայմանաւ :

307. 34°. Տնօրէն Ժողովոյ պաշտօնն է Ս. Աթոռոյ ընթացիկ և պատահական գործերը և Ս. Տեղեաց խնդիրները անօրինել, Ս. Աթոռոյ բոլոր պաշտօնակալները ընտրել, նոցա հարկաւորեալ հրահանգները տալ և պահպանութեան հսկել, փոխառութեան պէսքը ու պայմանները սահմանել, կալուածական գնումն և ըստ հաստատեալ կանոնաց վաճառումն վճռել, Միաբանից ընդունելութիւնը (բաց ՚ի Եպիսկոպոսներէ) որոշել, ամբաստանութիւնը քննել, հրաժարումը վճռել, աստիճանի բարձրացման արժանաւորութիւնը (բաց ՚ի Եպիսկոպոսութենէն) որոշել, և ՚ի դէպս մահուան ա-

նոնց սեփական գոյից վրայ կանոնական տնօրէնութիւնը կատարել :

ՅՕԴ. 35°. Տնօրէն ժողովը ամեն ամսագլուխ պաշտօնէից հաշիւները կը քննէ, չորս ամիսն անգամ մը Ս. Աթոռոյ էջեւմոյից վիճակը ստուգելով հարկաւոր տնօրէնութիւնները կը փակէ, եւ տարեգլուխ անցելոյն հաշիւները կը փակէ, եւ յաջորդին ելմտացոյցը կանխաւ յարգարելով՝ բացատրական Տեղեկագրութեամբ կը ներկայէ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ :

ՅՕԴ. 36°. Տնօրէն ժողովը համարատու է առ Միաբանական Ընդհանուր Ժողովն, զոր կը կատարէ տարեկան համարատու Տեղեկագրութեամբ, որոյ մէջ խնամով պիտի նշանակէ :

Ա. Միաբանական անդամոց ընդունելութեան, պաշտօնավարութեան, հաւատարիմ ծառայութեանց համար եղած վարձատրութեանց, ձեռնադրութեանց, հրաժարման և մահուան վերաբերեալ տնօրէնութիւնքն :

Բ. Միաբանական անդամոց ուսումնական յառաջադիմութեան, եւ ընդհանրապէս Ազգային Դաստիարակութեան նկատմամբ գործադրուած միջոցներն և արդիւնք նոցին :

Գ. Տնօրինական Ս. Տեղեաց և այլ Ուխտատեղեաց մէջ Օտարաց հետ ընկերովի և առանձինն Ազգային արտօնութեանց և սեփականութեանց մասին պատահած նշանաւոր դէպքերն և ասոնց նկատմամբ ընդ Ազգային Կեդրոնական վարչութեան, ընդ Տեղական Կառավարութեան, ընդ Քրիստոնեայ Օտարազգիս, և ուղղակի ընդ Նախ

րարս Տէրութեան կամ այլ պաշտօնակալս տեղի ունեցած յարաբերութիւնք և արդիւնք նոցին :

Դ. Տարւոյն Էնթաթիալ ելմտացոյցին նկատմամբ Ելեւմոյից կատարեալ վիճակը, և ՚ի մասնաւորի փոխառութեանց և կալուածական գնմանց եւ վաճառմանց եւ պարտոց վճարման նկատմամբ ՚ի գործ դրուած միջոցներն և արդիւնք նոցին :

Ե. Յաջորդ տարուան եւ Պադրեալ ելմտացոյցն և Ելեւմոյից հաւասարակշռութեան համար որոշուած միջոցներն :

ՅՕԴ. 37°. Տնօրէն ժողովոյ անդամք ըստ հարկին կարող են կարեւոր պաշտօններ եւս ստանձնել, որոց համար ինչպէս միւս պաշտօնեայք՝ պարտաւոր են կատարելապէս համար տալ Տնօրէն ժողովոյն, և ներկայ չը լինիլ այն նստին, յորում իրեն համարատուութիւնը կը քննուի :

Գ. ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 38°. Միաբանական Ընդհանուր Ժողովոյ անդամ են Միաբանութեան բոլոր Եկեղեցական անդամներն, մինչեւ ՚ի Սարկաւագունս՝ ՚ի միասին համարեալ :

ՅՕԴ. 39°. Ս. Պատրիարքը կը նախագահէ Ընդհանուր Ժողովոյ, եւ Ս. Աթոռը թափուր եղած ժամանակ՝ Պատրիարքական Տեղակալը : Բայց Ընդհանուր Ժողովն իր մասնաւոր Դիւանն ունի՝ Ատենապետ և Ատենադպիր և Փոխանորդներէ կազմեալ, զորս երկու տարի պաշտօն վա-

րելու պայմանաւ կ'ընտրէ իր մէջէն գաղանի քուէարկութեամբ :

307. 40°. Ընդհանուր ժողովն կը գումարուի .

Ա. Կանոնադրապէս ամեն տարեգլուխ (Մայիս) Տնօրէն ժողովոյ համարատուութիւնը առնելու և առ Ազգային Երեսփոխանական ժողովն իր հաճախը տալու , և՝

Բ. Պապականութեան Երբ Ս. Պատրիարքը , կամ Տնօրէն ժողովը մասնաւոր խնդրոյ մը համար հարկ տեսնեն , և կամ Ընդհանուր ժողովոյ Ս. Երուսաղէմի մէջ գտնուող անդամոց մէկ երրորդ մասը բացորոշ խնդրագրով հայցեն անոր գումարումը :

307. 41°. Ս. Պատրիարքը՝ կամ Ս. Աթոռոյ պարագայ ժամանակ Տեղակալը , եւ Պատրիարքի ամբաստանութեան միջոցին Պատրիարքական Փոխանորդը կը հրաւիրէ զանդամն 'ի ժողով , աֆէն անգամ Օրակարգի խնդիրը գէթ 12 ժամ առաջ գրով ծանուցանելով ամեն մէկուն :

307. 42°. Ս. Երուսաղէմի Գանձող Միաբանական Ընդհանուր ժողովոյ անդամոց թուոյն կէսէն մէկ աւելին բաւական է օրինաւոր Ատեան կաղմելու եւ ամեն խնդիր լուծելու և ընտրութիւններն ընելու , բաց 'ի Պատրիարքական ընտրութեաց , Լուսարարապետի եւ Տեղակալի ընտրութիւններէն՝ որոց համար Ընդհանուր ժողովոյ Բոլոր անդամոց կէսէն գէթ մէկ աւելի անդամոց ներկայութիւնն անհրաժեշտ է :

307. 43°. Միաբանական Ընդհանուր ժողովոյ պաշտօնն է .

Ա. Պատրիարքական ընտրելիներն , և Ս. Աթոռ

ռէն Պատրիարքի հեռացուցման ժամանակ Տեղակալութեան ընտրելիներն , և Ս. Աթոռոյ Թափուր մնացած ժամանակ Տեղակալն , Լուսարարապետը և Տնօրէն ժողովոյ անդամներն ընտրել .

Բ. Միաբանական Վարչութեան եւ նոյն իսկ իրեն համար Մասնաւոր կանոնադրութիւններ հաստատել , կամ պայմանաւ ժամանակին բարեփոխել , Տնօրէն ժողովէն առաջարկուած խնդիրները լուծել , Եպիսկոպոսութեան ընտրութեաց արժանաւորութիւնը քուէարկել , Եպիսկոպոս Միաբանացուներու ընդունելութիւնը վճռել , Միաբանից արտաքսումն արտասանել , 'ի դէպս մահուան Պատրիարքի՝ նորա սեփական և Պատրիարքարանի գոյից վրայ եղած կանոնական տնօրէնութիւնը լսել , և վերջապէս Տնօրէն ժողովէն համար առնուլ :

307. 44°. Ամեն տարեգլուխ Միաբանական Ընդհանուր ժողովն Տնօրէն ժողովոյ համարատուութեան Տեղեկագիրն և Ելմտացոյցն ընդունելով՝ ստուգելէն և վաւերացնելէն յետոյ , իր կողմէն համարադրութեան Տեղեկագիր կ'ուղղէ առ Ազգային Երեսփոխանական ժողովն , մի առ մի նշանակելով 'ի նմա 357. յօդուածի տրամադրութեան համաձայն տարւոյն մէջ կատարուած , Վարչական , Տնտեսական , Ելմտական , եւ Բարեկարգական տնօրէնութիւնքն :

Գ Լ Ո Ւ Խ Գ.

ՎԱՐՁԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՔ ԵՒ ՊԱՇՏՈՆԱԿԱԼԻ

Ա. ԼՈՒՍԱՐԱՐԱՐԱՊԵՏ

ՅՕԴ. 45°. ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏԻՆ պաշտօնն է՝
Ա. Տնօրինական Ս. Տեղեաց եւ այլ Ուխտա-
տեղեաց և բոլոր Եկեղեցեաց Հէջ Աստուածային
պաշտամանն ըստ կանոնաց Եկեղեցւոյ կատարուե-
լուն վերատեսչութիւնը, և՝

Բ. Ս. Աթոռոյն սեփական բոլոր Եկեղեցական
անօթոց, զարդուց, զգեստուց, գրեանց, և այլ
կահուց և կարասեաց անկորուստ և անեղձ պահ-
պանութիւնը :

ՅՕԴ. 46°. Լուսարարապետին հսկողութեան
ենթարկեալ են .

Ա. Ի մասին Եկեղեցական պաշտաման, Միա-
բանութեան բոլոր Եկեղեցական անդամներն, և
ի մասնաւորի՝ Ժամօրհնող, Խոստովանահայր,
Ժամասաց և Ժամարար Վարդապետք, Սարկաւա-
գունք և Դպիրք, Մասագործք և Ժամակոչք. և՝

Բ. Ի մասին աւանդապահութեան բոլոր Լու-
սարարք և այլ սպասարկուք Եկեղեցւոյ :

ՅՕԴ. 47°. Ս. Աթոռոյ Աւանդատան մէջ
ինչպէս նաեւ զանազան Ուխտատեղեաց և Ս. Տա-
ճարաց մէջ գտնուած բոլոր Եկեղեցական անօ-
թոց, զարդուց, զգեստուց, գրեանց, և այլ կա-
հուց և կարասեաց մանրապատուժ Մայր-Տուփարն

Ս. Աթոռոյ Աւանդատան մէջ պահուելով, Լու-
սարարապետն՝ Միաբանական Ընդհանուր Ժողո-
վով ընտրուելէն, և սովորական արարողութեամբ
Աւանդատան բանալին Ս. Գլխադրէն իր ձեռք
առնելէն ետքը, նոյն Տուփարն՝ ինչպէս նաեւ իր
նախորդի մասնաւոր Տուփարն՝ Աւանդատան վի-
ճակին հետ բաղդատելով, անոնց մէջ կ'արձա-
նագրէ իր ղեկավարութիւնքն և կը ստորագրէ :

ՅՕԴ. 48°. Իւրաքանչիւր Լուսարարապետ իր
Ժամանակին համար մասնաւոր Ժապաւինեալ Տու-
փար մը կ'ընդունի Տնօրէն Ժողովէն եւ անոր մէջ
կ'արձանագրէ մանրամասնաբար ,

Ա. Ի՛նչ անօթ, զգեստ, զարդ, և այլն, որ կը
յանձնուի իրեն յԱտենի Տնօրէն Ժողովոյ, և՝

Բ. Ի՛նչ փոփոխութիւն որ հարկ տեսնուի և
Տնօրէն Ժողովոյ որոշմամբ կը կատարուի Աւան-
դատան մէջ գտնուած անօթոց, զգեստուց, և այլն
վրայ (նորոգութիւն, ձեւի փոփոխութիւն, ջրն-
ջումն, և այլն), և ամեն մէկ արձանագրութեան
ներքեւ թէ՛ Ինքն կ'ըստորագէ եւ թէ՛ Տնօրէն
Ժողովոյ Դիւանին ստորագրել կուտայ :

Բ. ՊԱՏՐԻԱՐԻԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ

ՅԵՐՈՒՍՏԱՂԷՄ

ՅՕԴ. 49°. Ս. Պատրիարքը կ'ընտրէ իր Փո-
խանորդն Տնօրէն Ժողովոյ մէջէն, որ կը վարէ իր
պաշտօնը հրամանաւ Ս. Պատրիարքի ըստ որոշ-
մանց Տնօրէն Ժողովոյ. եւ ի բացակայութեան

Ս. Պատրիարքի կը նախագահէ ժողովոյց և կ'ստու-
րագրէ պաշտօնական գրերն :

Գ. ԵԼԵԻՄՏԻՑ ՏԵՍՈՒՉ

ՅՕԴ. 50°. Ելեւմտից Տեսուչը կ'ընտրուի Տնօ-
րէն ժողովէն և համարատու է նմա , և պաշտօնն
է Ս. Աթոռոյ ելեւմտից կանոնաւոր տնտեսու-
թեան և համարակալութեան վերառեւելութիւնը :

ՅՕԴ. 51°. Ելեւմտից Տեսչին հսկողութեան
ենթարկեալ են ինչպէս Հաշուական Դիւանի յա-
տուկ պաշտօնեայք , նոյնպէս 'ի մասին հաշուա-
կան գործողութեանց՝ բոլոր պաշտօնակալք Միա-
բանութեան :

ՅՕԴ. 52°. Ս. Աթոռոյ ելեւմուտք կանխաւ
սահմանեալ Ելմտացոյցին համեմատ կը տնօրինուին
ելմտական տնտեսութեան զանազան ճիւղերու
Պաշտօնակալաց ձեռք , որոց ամենուն գործառ-
նութեանց կանոնաւորութեանը կը հսկէ Ելեւմը-
տից Տեսուչը , և չորս ամիսը անգամ մը Ս. Աթո-
ռոյ ելմտական վեճակը կը ներկայէ Տնօրէն ժո-
ղովոյ :

ՅՕԴ. 53°. Ս. Աթոռոյ ամեն տեսակ ելեւ-
մուտքն իրենց հաշուետետրներով կը ներկայաց-
ուին Ս. Պատրիարքին , և Տնօրէն ժողովոյ որոշ-
մամբ կը գանձուին կամ կը վճարուին Ելեւմտից
Տեսչի ձեռք : Իսկ Ելմտացոյցէ դուրս ծախուց
վճարումն կը լինի Տնօրէն ժողովոյ մասնաւոր
որոշմամբ և պաշտօնագրով :

ՅՕԴ. 54°. Ս. Աթոռոյ փոխառական գործո

ղութիւնք Ելեւմտից Տեսչին ձեռք կը կատար-
ուին՝ Տնօրէն ժողովոյ որոշումն ստանալէ յետոյ :

ՅՕԴ. 55°. Ս. Աթոռոյ բոլոր ելմտական գոր-
ծողութիւնք կրկնատումարի օրինօք կ'արձանագ-
րուին Հաշուակալի ձեռք որ ընդ հսկողութեամբ
Ելեւմտից Տեսչին կը գործէ և պատասխանատու
է նմա :

ՅՕԴ. 56°. Տնօրէն ժողովոյ մէջ լինելիք ամեն
ելմտական տնօրէնութիւնք և հաշուական գործ-
առնութիւնք Ելեւմտից Տեսչին ներկայութեամբ
և խորհրդակցութեամբ կը լինին :

Դ. ԴԱՐԱՍՏՐՆԿԱԼ

ՅՕԴ. 57°. Դարաստրնկալն՝ Դրամնկալ և Տու-
մարակալ Վարդապետներով իբր Դարաստական
Յանձնախումբ՝ մէկ տարուան համար Տնօրէն ժո-
ղովէն կ'ընտրուին և ամենն ալ անմիջապէս վեր-
ընտրելի են : Ի հարկին Դարաստական Յանձնա-
խմբին օգնականներ կը նշանակուին Ս. Պատրի-
արքին հրամանաւ :

ՅՕԴ. 58°. Դարաստրնկալին պաշտօնն է՝ հրս-
կել ուխտաւորաց պատշաճապէս հիւրընկալուե-
լուն , ընդունել նոցա Դարաստական նուէրներն ,
բռնել անոնց կանոնաւոր հաշիւը եւ գոյացեալ
արգիւնքն գիտութեամբ Ս. Պատրիարքին՝ Դրա-
մնկալին միջոցաւ յանձնել Ելեւմտից Տեսչին :

ՅՕԴ. 59°. Դարաստրնկալին հսկողութեան
ենթարկեալ են , Դրամնկալ , Տումարակալ եւ

Հիւրընկալ Վարդապետք , Սենեկապանն , Շորապահը և Պղնձապահը :

Ե . ԴՊՐՈՑԱՅ ՏԵՍՈՒՉ

ՅՕԴ . 60°. Դպրոցաց Տեսուչը կ'ընտրուի Տնօրէն ժողովէն և իւր պաշտօնն է՝ Ժառանգաւորաց Վարժարանի , Երուսաղէմի երկսեռ Նախակրթարանաց , Բեթղէհէմի և Յոպպէի Վարժոցաց Վերատեսչութիւնը :

ՅՕԴ . 61°. Տեսչի հսկողութեան ենթարկեալ են՝ Ժառանգաւորաց Վարժարանի և Նախակրթարանաց ու Վարժոցներու Ուսուցիչները եւ բոլոր ծառայողները :

ՅՕԴ . 62°. Դպրոցաց Տեսուչը ըստ որոշման Տնօրէն ժողովոյ կը տնօրինէ Ժառանգաւորաց Վարժարանի , երկսեռ Նախակրթարանաց եւ Թեմական Վարժոցաց վերաբերեալ դորձերն եւ խնդիրներն :

ՅՕԴ . 63°. Ժառանգաւորաց վարժարանը կը կառավարուի հետեւեալ հիմնական ծրագրոյն համեմատ .

Աշակերտք արդէն նախակրթեալք կ'ընդունուին ընտրութեամբ իբր Ժառանգաւորք Եկեղեցւոյ 16 էն մինչեւ 18 տարեկան . մի կողմէն կ'ուսանին՝

1°. Լեզուագիտութիւն—Հայերէն , Գաղղիերէն եւ Տաճկերէն :

2°. Կրօնագիտութիւն :

3°. Քանակագիտութիւն—Թուաբանութիւն կա-

տարեալ . Դրահաշիւ եւ Տարերք երկրաչափութեան :

4°. Պատմութիւն—Սրբազան , Եկեղեցական , Ազգային և արտաքին :

5°. Երգեցողութիւն—Ձայնագրութեամբ Եկեղեցական եւ Ազգային :

6°. Աշխարհագրութիւն :

7°. Տիեզերագրութիւն :

8°. Գծագրութիւն եւ Գեղագրութիւն :

9°. Տարերք ուսկան Պատմութեան եւ Գիտութեանց :

Եւ միւս կողմէն՝ կը վարժուին Եկեղեցական պաշտամանց կանոնաւորապէս Դպրութիւն ընելով Եկեղեցւոյ մէջ , և յետ աւարտման դպրոցական շրջանին՝ Խախտող արժանաւոր հետզհետէ կը բարձրանան Եկեղեցական յաստիճանաց մէջ , իսկ մնացեալներն իրենց կարողութեան համեմատ զանազան գործերու մէջ կը գործածուին ըստ կանոնագրի Միաբանութեան :

Զ . ԴԻԻԱՆԱՊԵՏ

ՅՕԴ . 64°. Դիւանապետը Տնօրէն ժողովէն կ'ընտրուի , և պաշտօնն է ճշդութեամբ պատրաստել ժողովոյ ատենագրութիւններն՝ առաջնորդութեամբ նորա Դիւանին , և եղած որոշմանց համեմատ պաշտօնական Թղթակցութիւններն և Դիւանական արձանագրութիւններն ընել :

ՅՕԴ . 65°. Դիւանատան ամեն կարեւոր գրեր

և արձանագրութիւններ կը պահպանուին կանոնաւորապէս ցուցակագրեալ ընդ հսկողութեամբ և պատասխանատուութեամբ Դիւանապետին :

307. 66°. Դիւանատան պաշտօնեայք իրենց օրինաւոր պաշտօնավարութեան մասին պատասխանատու են Դիւանապետին :

Է. ԹԱՐԴՄԱՆ

307. 67°. Թարգմանը Տնօրէն Ժողովէն ընտրուելով իր պաշտօնը կը վար ընդ իշխանութեամբ Ս. Պատրիարքին և ընդ հսկողութեամբ Փոխանորդին՝ համաձայն հրահանգաց Տնօրէն Ժողովի :

307. 68°. Թարգմանը գործադիր է յարաբերութեանց ընդ տեղական կառավարութեան, ընդ Օտարազգի Վանօրայս և Պաշտօնեայս . և հսկող է բարեկարգութեան Քրձազգեաց Միաբանից, Ուխտաւորաց եւ Երուսաղէմի Հայ Ժողովրդոց, եւ միանգամայն անդամ է կառավարութեան Իսթրէֆ Ժողովոյ՝ յանուն Ս. Աթոռոյ :

Ը. ՏԵՍՉՈՒԹԻԻՆՔ ԿԱԼՈՒԱԾՈՅ

307. 69°. Տնօրէն Ժողովը կ'ընտրէ կալուածական բոլոր գործակալներն՝ Երուսաղէմ, ի շրջակայս, և ի զանազան գաւառս . Երուսաղէմ Վարձընկալի ձեռօք կը հաւաքէ վարձքերը, Շինուածապետի ձեռօք կը կատարէ բոլոր նորոգութեան գործերը . իսկ գրսերը նոյն գործերն կը կատարէ Տեսչաց և Գործակալաց միջոցաւ :

307. 70°. Ամեն ծախք ելնելէն ետքը՝ տարեկան գէթ 3 առ 100 արդիւնք չը բերող կալուածներն, և հեռաւորութեան կամայլ պարագայից պատճառաւ կանոնաւոր տնտեսութիւնը գժուարին կալուածները՝ (ի բաց առեալ անոնք որ չը ծախուելու պայմանաւ կտակեալ են Ս. Աթոռոյ), ծախուելու և անոնց տեղ արդիւնաւոր կալուածներ գնուելու, և կամ նոր գետին գնելու կամ նոր շէնք շինելու որոշում տրուած ժամանակ, Տնօրէն Ժողովը կը գործադրէ զանոնք կամ կալուածական Պաշտօնէից ձեռօք և կամ յարմար դատած եղանակաւ :

Թ. ԹԱՆԳԱՐԱՆ

307. 71°. Ս. Աթոռոյ Թանգարանը՝ ձեռագիր եւ տպեալ մատեաններով, հնագիտական նիւթերով և բնական Պատմութեան և Գիտութեանց և Գեղարուեստից վերաբերեալ առարկաներով օժտեալ՝ հանդերձ իւր ընթերցարանով Թանգարանապետի մը տնօրէնութեան ներքեւ կը տնտեսուի՝ Ազգին եւ Միաբանական Ուխտին օգտակար ըլլալու եղանակաւ . և Տնօրէն Ժողովը կը հսկէ անոնց ըստ օրինի պահպանութեան եւ զարգացման :

Ժ. ՏՊԱՐԱՆ

307. 72°. Ս. Աթոռոյ Տպարանը՝ հանդերձ Գրավաճառութեան սենեկով, Տպարանապետի մը

անտեսութեան յանձնուելով, Տնօրէն ժողովը կը հսկէ երկուքին ալ կանոնաւորապէս, եւ Ազգին և Միաբանական Ուխտին բարոյապէս և նիւթապէս օգտակար ըլլալու կերպով տնտեսուելուն :

307. 73°. Սոյն սկզբամբ Տպարանապետը Տնօրէն ժողովը որոշմամբ, եւ Ս. Պատրիարքի Հրամանաւ կը տպագրէ միացն այն դէպքեր որ կրօնից և բարոյականի դէմ ոչ ինչ չեն ու զուեակեր և որ՝ (եթէ դուրսէն ծախքը վճարելով չսպորուած չեն) դիւրամատչելի գնով կրնան չափաւոր ժամանակի մէջ ծախուիլ շահաւոր եւ չափաւոր :

ԺԱ. ՄԱՏԱԿԱՐԱՐ

307. 74°. Մատակարարը կ'ընտրուի Տնօրէն ժողովէն և պաշտօնն է՝ Ընդհանուր Միաբանութեան սննդեան տնտեսութիւնը, զոր կը կատարէ Ելմտացոյցով նախասահմանեալ եղանակաւ և ողջապահիկ կանոնաց հետեւողութեամբ. իւր հրահրողութեան ենթարկեալ են՝ Յորենապահը, Մաւանապետը, Խոհարարը, Սեղանապետը, Արձեփ և Հացագործը :

307. 75°. Մատակարարը պարտաւոր է իւր պաշտօնին վերաբերեալ բոլոր պարէններն և նիւթերն, ինչպէս նաև Եկեղեցեաց ձէթն, ժամանակին որոշեալ չափով եւ քանակութեամբ առնել և ամպարել, և աչարջութեամբ հսկել կանոնաւորապէս տնտեսուելուն :

ԺԲ. ՀԱՆԴԵՐՁԱՊԵՏ

307. 76°. Հանդերձապետը կ'ընտրուի Տնօրէն ժողովէն եւ իւր պաշտօնն է՝ Միաբանութեան տարեկան հաշուստը ըստ որոշեալ տարազու եւ քանակութեան պատրաստել, և Հանդերձարանի արաբերեալ ամեն նիւթերն հոգատարութեամբ պահպանել :

ԺԳ. ՅԺԻՇԿ ԵՒ ԴԵՂԱԳՈՐԾ

307. 77°. Միաբանական հիւանդաց ալցելութեան հոգն ու խնամքը Բժիշկին, և Դեղարանի տնտեսութիւնը՝ Գեղագործին կը յանձնուի ընդհանրողութեամբ Թարգմանին, որ անոնց ճշդիւ եւ կանոնաւորապէս կատարուելուն պատասխանատու է :

ԺԴ. ՊԱՏՐ. ՓՈԽԱՆՈՐԴ Ի ՊՕԼԻՍ

307. 78°. Պատրիարքական փոխանորդն Ս. Աթոռոյ ներկայացուցիչն է ի Կ. Պօլիս, միջնորդ յարաբերութեանց ընդ երկուս Աթոռս Պատրիարքականս, Տեսուչ կարուածոց և Գործադիր Պատրիարքական եւ Վարչական յանձնարարեալ Աթոռապատկան ամեն գործոց :

307. 79°. Պատրիարքական փոխանորդն կ'ընտրուի Տնօրէն ժողովէն Ս. Պատրիարքի առաջարկութեամբ, սոյն ժողովէն կ'ընդունի իւր հրահանգն և պատասխանատու է նմա :

ԺԵ . ՏԵՍՈՒՉՔ

307. 80°. Տեսուչներն Ս. Աթոռոյ ներկա յայտուցիչներն են՝ իրենց պաշտօնավարութեան յատկացեալ տեղումներ, և կը վարուին մասնաւոր հրահանգաց համեմատ զոր Տնօրէն ժողովը կու տայ պաշտօնի կոչած ժամանակ :

307. 81°. Տեսուչներն՝ ինչպէս Եւել ֆոխա նորդն 'ի Կ. Պօլիս , իրենց Տեսչութեան ենթարկեալ Միաբանից և Պաշտօնակալաց (Ժամարար , Սարկաւազ , Դպիր , Թարգման , Պահակ , Ճապի , և այլն) Պաշտօնավարութեան հսկող և պատասխանատու են :

ԺԶ . ԳՈՐԾԱԿԱԼՔ ԵՒ ԴԱՆՁԱՊԵՏՔ

307. 82°. Այն տեղերը , ուր կարելի չ'է Միաբանութենէ յատուկ Եկեղեցական Տեսուչներ դնել , պատուաւոր եւ վստահելի աշխարհական Գործակալներ կը կարգուին եւ կը հաստատուին որոշմամբ Տնօրէն ժողովոյ , նոյն վիճակին մէջ եղած Ս. Աթոռոյ Կալուածոց Տեսչութիւնը ընելու և իրենց յանձնարարեալ ուրիշ Աթոռապատկան գործերը կատարելու :

307. 83°. Գանձապետք նոյնպէս կ'ընտրուին Տնօրէն ժողովէն և կը հաստատուին Ս. Պատրիարքի կօնդակաւ , և պաշտօնակալն իրենց գտնուած տեղւոյն և վիճակացին Տեսչութեան մէջ յանուն Ս. Երուսաղէմի շրջապայծ գործակալներու ար-

դիւնքն հասցնել 'ի Ս. Աթոռն իրենց տրուած հրահանգաց համեմատ :

ԺԷ . ԱՅՅԵԼՈՒՔ ԵՒ ՆՈՒԻՐԱԿ

307. 84°. Այցելուք և Նուիրակք մասնաւոր Պաշտօնակալք են , որ կը ղրկուին առ Ժամայ պաշտօնի պէտք եղած տեղումներ , և կը վարուին ըստ հրահանգաւ զոր կ'ընդունին Տնօրէն ժողովէն պաշտօնի և ղւած ժամանակ :

Գ Լ ՈՒ Խ Դ .

ՎԱՐՁԱԿԱՆ ԸՆԹԱՅՔ

307. 85°. Այսին պաշտօնական նամակ եւ խնդրագիր Ս. Պատրիարքին կ'ուղղուի , որ Դիւանատունը կը յանձնէ յարձանագրութիւն , և ապա կը ներկայացնէ ժողովին 'ի տնօրէնութիւն , իսկ այն գրերը որոնք նախաքննութեան կը կարօտին , ժողովին ներկայացնելէ առաջ կը յանձնէ տրտուկանեալ պաշտօնէին 'ի նախաքննութիւն :

307. 86°. Ժողովոյ օրօշումներն պարունակող ամեն պաշտօնագիրք կ'ստորագրուին Ս. Պատրիարքէն , իսկ Տնօրէն ժողովէն առ Ընդհանուր ժողովն և Ընդհանուր ժողովէն առ Տնօրէն ժողովն եղած պաշտօնագիրք նախագահին ուղղուելով կ'ստորագրուին նոյն Գլխաններուն կողմէն , բայց Ընդհանուր ժողովէն առ Ազգային Երես-



փոխանական ժողովն ուղղեալ պաշտօնագիրք կ'ըստորագրուին Նախագահի և Ատենապետի կողմէն :

ՅՕԴ. 87°. Ընդհանուր և Տնօրէն ժողովոց որոշումները կը գործադրուին Ս. Պատրիարքի կողմէն համաձայն նոցա արձանագրութեանց և որոշմագրոց . եթէ Ս. Պատրիարքը Տնօրէն ժողովոյ որոշման պարակարծիք գտնուի , երկրորդ անգամ հրաւէր կը կարգայ ժողովոյն անգամ մ'ալ խորհրդածել նոյն խնդրոյն վրայ , և եթէ եւս արձեղհամայնութիւն չը գոյանայ , խնդիրը կը յանձնէ Միաբանական Ընդհանուր ժողովոյն որուն որոշումը պարտաւոր է ընդունիլ և գործադրել :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

ՎԵՐԱԳՆՆՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 88°. ՍՈՅՆ Կանոնագիրքը վերաքննելի է Ազգային Երեսփոխանական ժողովով վաւերացման օրէն հաշուելով չորս տարի ետքը , և վերաքննութիւնը Միաբանական Ընդհանուր ժողովով կը կատարուի , և Ազգային Երեսփոխանական ժողովոյ կը մատուցուի ՚ի վաւերացումն :

ՅՕԴ. 89°. Մինչեւ վերաքննեալ կէտերուն Ազգային Երեսփոխանական ժողովով վաւերացումը՝ հին տրամադրութիւնը անփոփոխ ՚ի գործադրութեան կը պահուին :

ՀՀ Ազգային գրադարան



NL0029782

